ՄԾԴ.

Զուարճալի դէպք մը... Պոլսոյ մէջ մինարէի մը խաչանիշ գագաթը։

Գերայարգ և գերապատիւ Տեառն Տեառն Աբրահամ հօր վերոյ Ստեփանոս վարդապետի ողջոյն ազահամբոյր

... Մահտարաժամն երբեմն երբեմն զօրանայ ի քաղաքիս և երբեմն մեղմանայ, յաւուրս յայսոսիկ անդէն զօրացաւ. անկաւ նաև ի տէօրթիօլաղզըն...։ Ի թէրսխանան որ է հանդէպ ֆէնէրին ուր մերքն բնակին այժմ, մեռան աւելի քան զ70 մարդիկ...։ Յաւուրս յայսոսիկ ի մէջ երկու և երեք ամսոց երիցս եանղըն անկաւ ի տէօրթիօլաղզըն, և միանգամ ևս ի ստամպօլ, բայց չիջուցին վաղվաղակի. այլ երեք աւուրբք յառաջ մօտ առ մեզ ի մէջ այվան սարային և պալաթին անկաւ հրդեհ յութերորդ ժամու գիշերոյն, և տևեաց ժամս հինգ, և էր գիշերն գիշեր շաբաթու, և ամենայն այրեցեալ բնակարանքն էին բնակարանք հրէից ոլք արտաքոյ ամրոցին. և ամենայն շաբաթացեալ հրեայքն որ անդ, ոլք և ոչ ի նաւակս ելանեն յաւուրս շաբաթուց, զեղան ի նաւակս, և թի ևս քաշեցին։ Յաւուրս յայսոսիկ խաչանիշ նշան մի երևութացաւ ի գլուխ մինարէի միոջ որ ի պալաթ, և տևեաց զաւուրս բազումս, մինչև հռչակեցաւ բանն ընդ ամենայն քաղաքն, և յոյնք սկսան երթալ յուխտ սքանչելեաց նշանին, և այնչափ սքանչելիս և զարմանս յաճախեցին, մինչև եասախճիս կացուցին տաճիկք ի փողոցս յորս երևէր նշանն, և հարկանէին զքրիստոնեայս ոլք հետաքննին լինէին հայիլ ի նշանն, և այնպիսի ապտակ հանին միում ի յունացն մինչև դէմք հարեցելոյն ի թիկունս դարձան։ Այլ յետոյ իրացն ստուգութեան ի վերայ հասաք որ այսպիսի էր. հնացեալ ժամանակաւ մահիկն լուսնին զոր դնեն ի գլուխ մինարէյին, և կոչեմ ալէմ, զերկոսին ծայրս նորա կապեալ են թելիւ ընդ միմեանս զի մի անկցի, որով մահիկ լուսնին եղեալ է այսպէս ☽. և յանցանել ժամանակաց նոյն մահիկն առաւել ևս հնանալով իջեալ ի վայր ի վեր ելեալ է ցիցն, յորոյ ի ծայրն հաստատեալ կայր մահիկն, այսպիսի օրինակաւ, —☽—. և ահա խաչն իջեալ յերկնից որ այժմ է ի կրպակ դարբնոյն, յարմարել զնա ըստ առաջին յօրինուածոյն իւրոյ. զայս ամենայն տեղեկութիւն իրացն ստուգութեան առաք ի թարգմանէ նէմցէյու դեսպանին, զոր առաքեաց դեսպանն եասախճիով տեղեկանալ զորպէսն սքանչելեացս։ Գողք, ոմանք ասեն 22, և այլք 16, եկեալ են այտի, այսինքն ի վէնէտիկու ի կողմանս յայսոսիկ. և նախ յիզմիր կողոպտեցին զեկեղեցիս մինչդեռ մեք յիզմիր էաք, և յաւուր յորում հանդերձեալ էաք մեք մտանել ի նաւ առ ի գալ ի Կոստանդնուպօլիս, յեկեղեցւոյ ֆռանչիսքանցւոց գողացեալ էին զթախտըմ մի ծանր սպասուց պատարագի ընդ այլոց արծաթեղինաց, և մեզ ցուցին պատրիքն գծածկոցն սկուտն զոր թողեալ էին գողացողքն զզգեստն նորա։... Ի կոստանդնուպօլիս ի բազում եկեղեցեաց գողացան բազում ինչ, ևս ի միոջէն զսրբատուփն սուրբ հաղորդութեան, լցեալ զսուրբ նշխարսն ի վերայ սեղանոյն։ Այլ յաւուրս յայսոսիկ երկու և երեք ի նոցանէ ի ձեռս եկին, և են այժմ ի թին ըստ խնդրոյ դեսպանին վէնէտկոյ, բայց ընկերք նոցա տակաւին ոչ յայտնեցան։...

Ցամի տեառն 1765 *Նուաստ ծառայ*
ի մարտի 20 [*Կ. Պոլիս*] *Հ. Անանիա վարդապետ* [*Ճամպազօղլու*]